ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2022 թվականի №-Ա
քաղ. Երևան

«ՌԱԴԱՐ ԱՐՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2022 թվականի ապրիլի 11-ի №03/11.1/2651-2022 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում հայտնաբերվել է 884.6-888.6ՄՀց և 1760-1780ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթներում ճառագայթող բջջային կապի վերահաղորդակ, որը տեղակայված է Երևան քաղաքի Բրյուսովի փողոցի №30 հասցեում (գործունեություն իրականացնող անձ՝ «ՌԱԴԱՐ ԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն),

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ «ՌԱԴԱՐ ԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 14-ի №ԱԾ/34.2-Մ2-9/1175-2022 գրությունը, որին ի պատասխան «ՌԱԴԱՐ ԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համապատասխան աշխատակիցների այցի արդյունքում՝ խնդիրների մասին տեղեկանալուց հետո վերահաղորդիչ սարքն անջատվել է և ներկայումս չի օգտագործվում,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ և «ՌԱԴԱՐ ԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրությամբ փաստվել է

վերջինիս կողմից առանց թույլտվության 884.6-888.6ՄՀց և 1760-1780ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՌԱԴԱՐ ԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 884.6-888.6ՄՀց և 1760-1780ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթների օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՌԱԴԱՐ ԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------2022թ.